ԽՈՐԷՆ ԱՐՔ. ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻ ԵՐԿՈՒ ԶԵԿՈՒՅԱԳՐԵՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԷՈՐԳ Ե ՍՈՒՐԷՆԵԱՆՑԻՆ

Ամենայն Հայոց կաթողիկոսների երանելի փաղանգի մէջ իր արժանաւոր տեղն է զբաղեցնում երջանկայիշատակ Խորէն Ա Մուրադբէկեանը: 1901թ. անցնելով հոգեւորականութեան շարքերը՝ Խորէն (աւազանի անունով՝ Ալէքսանդր) Մուրադբէկեանը մինչեւ կեանքի վերջին րոպէն (6 ապրիլի 1938թ.) անմնացորդ կերպով իրեն նուիրեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Դժուար է աւելի դիպուկ բնորոշել Խորէն վեհափառի անձը, նրա գործն ու վաստակը, քան այդ կատարել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն: «Կան յիշատակներ, որոնք վեր են ժամանակի իշխանութիւնից՝ արձանագրուելով ոչ միայն ազգի պատմութեան ոսկէ էջերում, այլ նաեւ իւրաքանչիւրի հաւատաւոր սրտում եւ հոգում: Այդպիսին է եւ այդպիսին պիտի լինի նահատակեալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Խորէն Մուրադբէկեանի յիշատակը, քանզի բազմավաստակ Հայրապետը, որպէս Գրիգոր Լուսաւորչի գահի արժանաւոր ժառանգորդ, հերոսացաւ ու հաւերժացաւ իր բոլորանուէր կեանքի ճանապարհին՝ պաշտպանելով եկեղեցին Հայաստանեայց՝ իր օրինակով ամուր պահելով լոյս հաւատքն ու եկեղեցասիրութիւնը հայորդեաց», – նշել է Վեհափառը Խորէն հայրապետի եղերական մահուան 70-րդ տարելիցին նուիրուած յուշ-երեկոյի առթիւ[1]:

Գործելով հայութեան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար դժուարին, ճակատագրական ժամանակներում (ցարական ինքնակալութեան հալածանքներ, Հայոց Մեծ Եղեռն, անկախ պետականութեան վերածնունդ, բոլշեւիկեան մենատիրութիւն), Խորէն Մուրադբէկեանն իր մասնակցութիւնն է բերել ազգին ու Սուրբ Եկեղեցուն առընչուող ամենատարբեր խնդիրների կարգաւորման գործընթացին: Ահա այս պատճառով նրա մասին առկայ է մեծածաւալ վաւերագրական նիւթ: Չնայած այն հանգամանքին, որ Խորէն Վեհափառի գործունէութեան վերաբերեալ լոյս են տեսել մեծածաւալ արխիւային փաստաթղթեր[2], դեռեւս մեծ թիւ են կազմում Երանելի Հայրապետի գործունէութիւնն արտացոլող անտիպ վաւերագրերը:

Ստորեւ առաջին անգամ հրապարակուող երկու փաստաթղթերը լոյս են սփռում Երեւանի թեմական առաջնորդ հանդիսանալու շրջանում (1909-1924 թթ.) Խորէն Մուրադբէկեանի գործունէութեան որոշ էջերի վրայ: Ներկայացուող գրութիւնները Խորէն սրբազանի 1921թ. մարտի 23-ի եւ յուլիսի 16-ի զեկուցագրերն են՝ ուղղուած Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե Սուրէնեանցին: Զեկուցագրերում խօսւում է եկեղեցուն ու պետութեանն առընչուող տարբեր խնդիրների մասին: Ներկայացուող փաստաթղթերը ոչ միայն կարեւոր են Հայ Եկեղեցու պատմութեան

1 «Էջմիածին», 2008, ապրիլ (Դ), էջ 128:

2 Մասնաւորապէս տե՛ս «Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան», կազմող՝ Ս. Բեհբուդեան, գիրք Ա, Բ, Ե, ԺԳ, Եր., 1994-2005: «Նահատակ Հայրապետը. Տ. Տ. Խորէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս (1873-1932-1938)», աշխատասիրութեամբ՝ Գ. Աւագեանի, Ս. Էջմիածին, 2008:

տուեալ ժամանակափուլի ուսումնասիրման տեսակէտից, այլ նաեւ ունեն առօրեայ ճանաչողական նշանակութիւն:

1921թ. փետրուարի 18-ին Երեւանում կատարուեց իշխանափոխութիւն՝ դաշնակցական գործիչների ղեկավարութեամբ ապստամբները գրաւեցին մայրաքաղաքը եւ Հայաստանի յեղափոխական կոմիտէի փոխարէն կեանքի կոչեցին Հայաստանի Հանրապետութեան վերջին կառավարութիւնը՝ Հայրենիքի փրկութեան կոմիտէ անուանումով: Ամենայն Հայոց Կաթողիկոսը յոյս ունէր, որ նոր իշխանութիւնները Մայր Աթոռին կվերադարձնեն բոլշեւիկեան վարչակարգի կողմից բռնագրաւուած եկեղեցական հաստատութիւնները: Այս խնդրի մասին է հրապարակուող առաջին զեկուցագիրը: Փաստաթղթում Կաթողիկոսին են ներկայացւում այս առթիւ մարտի 21-ին Փրկութեան կոմիտէի նախագահ Սիմոն Վրացեանի հետ Խորէն եւ Կորիւն սրբազանների հանդիպման մանրամասները:

Երկրորդ զեկուցագրում Խորէն սրբազանը Կաթողիկոսին է ներկայացնում Աբէլ ծայրագոյն վարդապետից ստացած նամակի մանրամասները: Այստեղ խօսւում է Մայր Աթոռի օգտին Անգլիայում եւ Ֆրանսիայում կատարուած հանգանակութիւնների, հայրապետական «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանի պատրաստման, հայ մեծահարուստ Գալուստ Գիւլպէնկեանի հովանաւորութեամբ Լոնդոնում եկեղեցի կառուցելու, Մայր Աթոռի համար Բաֆֆու գրադարանն ու ձեռագրերը գնելու մասին:

Հրապարակուող փաստաթղթերը պահւում են Հայաստանի ազգային արխիւի (ՀԱԱ) թիւ 57 (Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիւան) ֆոնդում: Լեզուաոճական միջամտութիւններ չենք կատարել, պահպանել ենք ուղղագրութիւնը՝ անհրաժեշտութեան դէպքում կատարելով միայն որոշ կէտադրական շտկումներ: Տեքստերի կրճատ բառերը լրացուած են ուղղանկիւն փակագծերում (), իսկ պակասող բառերը բերուած են սուրանկիւն փակագծերում (<>):

ՀԱՄՕ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

1.
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ
ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԷՈՐԳ Ե ՍՈՒՐԷՆԵԱՆՑԻՆ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգ Ե Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոսին

Երեւանի թեմի առաջնորդից ամենախոնարհ յայտարարութիւն

23 մարտի 1921թ.

N 82

Ս. Էջմիածին

Ամսոյս 21-ին Տ. Կորիւն եպիսկոպոսի հետ ներկայացանք Հայաստանի փրկութեան կոմիտէի նախագահ պ. Ս. Վրացեանին՝ Ձեր պատուէրի համաձայն խօսելու Մայր Աթոռի հաստատութիւնների մասին:

Յայտնեցի պ. Վրացեանին, որ մենք Ձերդ Վեհափառութեան պատուէրով ենք ներկայանում իրան, որ դեռ փետրուարի 26-ին ինքը խոստացել էր ինձ, որ Մայր Աթոռի բոլոր հաստատութիւնները Վեհափառ Հայրապետի ցանկութեան համաձայն կը մնան իրենց նախկին դրութեան մէջ՝ կը յանձնուին վանքին հարկաւոր ձեւականութիւնները կատարելուց յետոյ: Մինչդեռ ոչ միայն այդ հաստատութիւնները չը յանձնուեցին ցայսօր, այլ մնացին կնքուած եւ, որ գլխաւորն է, Փրկութեան կոմիտէն սրբագործեց բոլշեւիկեան կարգերը եւ նոր կոմիսար ուղարկեց Ս. Էջմիածին:

Պ. Վրացեանը պատասխանեց. «Հայաստանում այժմ գործում է Փրկութեան կոմիտէն, որի պարտականութիւնն է երկիրը մաքրել բոլշեւիկներից, խաղաղացնել եւ ապա յանձնել ժողովրդին, որը եւ կը կազմի իր կառավարութիւնը եւ այդ կառավարութիւնը արդէն ձեռնհաս կը լինի իր որոշումները տալու բոլոր խնդիրների վերաբերութեամբ»:

Ես ընդհատեցի՝ ասելով, որ եթէ Փրկութեան կոմիտէն բացի ֆրոնտից այլ խնդիրներով չի զբաղւում, հապա ինչպէս բացատրել նոր կարգադրութիւնը Էջմիածնի ինստիտուտի պահպանութեան եւ նոր կոմիսար նշանակելու մասին: Պ. Վրացեանը պատասխանեց. «Մենք եղած կարգերը առ այժմ պահպանում ենք: Դուք պէտք է իմանաք, որ մեր ժողովուրդը դէպի ձախ է գնացել եւ եթէ Փրկութեան կոմիտէն անմիջապէս վերջ տայ եղած որոշ կարգերին, կարող է դժգոհութեանց տեղիք տալ եւ բարդութիւններ ստեղծել»:

Ես պատասխանեցի, որ եթէ կան շատ ձախացածներ, որոնք կը ցանկանան Էջմիածնի վերաբերութեամբ եղած նոր կարգերը պահպանել, ապա ես կարող եմ ասել, որ մեր ժողովուրդը աւելի աջ է գնացել եւ շատ-շատ է նրանց թիւը, որոնք դժգոհ են Փրկութեան կոմիտէից հէնց այն բանի համար, որ ցանկանում է պահպանել Էջմիածնի հաստատութիւնների վերաբերութեամբ բոլշեւիկների օրով եղած կարգերը:

Մեր խօսակցութեան ժամանակ ներկայ էր պ. Յ. Քաջազնունին[3], որը միջամտելով ասաց. «Սրբազան, այդ պ. Վրացեանի խօսքերից մի բան միայն Ձեզ պէտք է բաւարարէ, որ Փրկութեան կոմիտէի կարգադրութիւնները ժամանակաւոր են, ինչպէս եւ ինքը Փրկութեան կոմիտէն»:

Պ. Վրացեանը վերջում ասաց. «Յայտնեցէք Վեհափառ Հայրապետին, որ Էջմիածնի հաստատութիւնները պետականացուած չեն, որ Փրկութեան կոմիտէն հիմնական կարգադրութիւններ չի անում: Թող Վեհափառ Հայրապետը փանելի համարէ եղած դրութիւնը, մինչեւ որ կը կարողանանք երկիրը մաքրել բոլշեւիկներից»: Խոստացան հարկաւոր հրահանգները տալ պ. Ապրատեանին:

Վերոգրեալը պատիւ ունեմ ամենախոնարհաբար զեկուցանելու Ձերդ Վեհափառութեանը ի գիտութիւն, ի կատարումն Հայրապետական դիւանի փետրուարի 28-ի եւ մարտի 14-ի թ. թ. 49 եւ 62 գրութիւնների:

Խորին ակնածութեամբ խոնարհ որդի՝ ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 216, թ. 3-4: Բնագիր: Ինքնագիր:

2.
ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԷՈՐԳ Ե ՍՈՒՐԷՆԵԱՆՑԻՆ՝ ԱԲԷԼ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՑ ՍՏԱՑՈՒԱԾ ՆԱՄԱԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ[4]

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգ Ե Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոսին

Երեւանի թեմի առաջնորդից ամենախոնարհ յայտարարութիւն

16 յուլիսի 1921թ.

N 1274

Երեւան

Այսօր ստացայ Տ. Աբէլ ծ. վարդապետից[5] մի պատահական նամակ, ուղարկուած Թէհրանի վրայով Տ. Սահակ արքեպիսկոպոսի[6] միջոցով, գրուած ապրիլի 14-ին: Ինչպէս գրում է՝ նամակը ուղարկել է այդ ձեւով իբրեւ փորձ, ուստի եւ պաշտօնական որեւէ ծրար չի ուղարկել:

---

3 Յայտնի ճարտարապետ, հասարակական-քաղաքական գործիչ, Հայաստանի Հանրապետութեան առաջին վարչապետը:

4 Գրութեան վրայ մակագրուած է՝ «24/VII/1921թ., թ. 217»:

5 Աբէլ ծայրագոյն վարդապետ Աբրահամեանը (Նազարեան) Մանչեստրի, իսկ այնուհետեւ Լոնդոնի հոգեւոր հովիւն էր: 1930-ական թթ. խորհրդային իշխանութիւնների կողմից աքսորուել է Սիբիր:

6 Սահակ արքեպիսկոպոս Այվազեանը Հայ Առաքելական Եկեղեցու Պարսկա-Հնդկաստանեան թեմի առաջնորդն էր:

Տ. Տիրայր եպիսկոպոսի[7] ձեռքով ուղարկուած կոնդակները եւ դիւանական գրութիւնները ստացել է յունուար ամսու սկզբներին, երբ Տիրայր եպիսկոպոսը հասել է Փարիզ, որտեղից մարտի սկզբներին մեկնել է Ամերիկա: Հանգանակութեան կոնդակը Տ. Աբէլ ծ. վարդապետը անձամբ կարդացել է Լոնդոնում, Մանչեստրում, Փարիզում եւ Մարսէյլում եւ ապա հրատարակել է եւ տուել գաղութների հայութեանը: Յիշեալ քաղաքներում կարելի է <սրեղծել> տեղական յանձնախմբեր, իսկ Լոնդոնում՝ հանգանակութեան կենտրոնական յանձնախումբ: Թէեւ վերջին անցուդարձերը չափազանց ազդել են գաղութների հայութեան վրայ, միւս կողմից էլ վաճառականութիւնը սոսկալի կրիզիս է ապրում, եւ շատերը սնանկութեան ճանապարհին են, այնուամենայնիւ Տ. Աբէլ ծ. վարդապետը յոյս է յայտնում, որ հանգանակութիւնը յաջողութիւն կունենայ, քանի որ Ս. Էջմիածինը մեծ տեղ ունի ժողովրդի սրտում ու հաւատում է, որ մօտ ժամանակներս մի աչքի ընկնող գումար պատրաստ կունենայ եւ հնարաւոր ապահով եղանակով կուղարկէ Ձերդ Վեհափառութեանը:

Առաջնորդական ընտրութեան վերաբերութեամբ նա հարկաւոր նախապատրաստական աշխատանքները կատարել է, եւ այս օրերս Փարիզում կայանալու է պատգամաւորական ժողով: Աւելացնում է, որ ժողովուրդը այնքան էլ հետաքրքրութեամբ չի վերաբերւում առաջնորդի ընտրութեան խնդրին:

Հայրապետական «Ս. Գրիգոր Լուսաւորչի» շքանշանները պատրաստ են[8], դժբախտաբար հնարաւորութիւն չունի ուղարկելու: Համաձայն Ձերդ Վեհափառութեան հրամանի՝ առանձին հանդիսաւորութեամբ յանձնել է կապիտան Գրեսսէին մի շքանշան, մի շքանշան եւս, համաձայն Ձերդ Վեհափառութեան պատուէրի, ուղարկուել է Տ. Տիրայր եպիսկոպոսի ձեռքով Ամերիկա:

Շքանշանները, ինչպէս զեկուցել եմ, երկու տեսակի են՝ հոգեւորականի եւ աշխարհականի: Երկու տեսակներն էլ երկուական աստիճան ունեն: Առաջին աստիճանը ոսկեայ է՝ էմայլով ու քարերով, իսկ երկրորդ աստիճանը՝ արծաթեայ ոսկեջրած:

Աբէլ ծ. վարդապետը զեկուցել է Ձերդ Ս. Օծութեանը Լոնդոնի հայկական եկեղեցու շինութեան նախապատրաստական աշխատանքների մասին: Նա հանգանակել էր 7000 ոսկի եւ գնել էր եկեղեցու համար տեղ: Այժմ յայտնում է, որ մեր ամենահարուստ ազգային Գալուստ Գիւլպէնկեանը տուել է 15 հազար ոսկի եկեղեցու շինութեան համար: Գալուստ Գիւլպէնկեանը եկեղեցին իր հաշուով կառուցանում է ի յիշատակ իր հօր՝ Սարգիս Գիւլպէնկեանի: Նա խոստացել է տալ նաեւ եօթ հազար ոսկին, որով գնուած է հողը, որպէսզի հողն էլ, շէնքն էլ լինի իր կողմից նուէր ազգին:

Վեհափառ Տէ՛ր, Գալուստ Գիւլպէնկեանը մեծ հայրենասէր է, ամենահոշոր հայ հարուստը եւ շատ խելօք, պատուաւոր անձնաւորութիւն է: Երբ ես Լոնդոն էի, նրանից դժգոհում էին, որ եկեղեցու հողը իր հաշուով չը գնեց, բայց պատճառը ինձ համար հասկանալի էր, քանի որ մեր ազգային պատուիրակները շարունակ դրամ էին խնդրում նրանից եւ զանազան պարտականութիւններ դնում վրան: Թուում է ինձ, ինչպէս եւ սպասում էի, որ նրա տրամադրութիւնները փոխուել են, եւ նա Մայր Աթոռի համար չափազանց օգտակար պիտի լինի:

7 Տիրայր եպիսկոպոս Տէր-Յովհաննիսեանը Հայ Առաքելական Եկեղեցու Ամերիկայի թեմի առաջնորդն էր (1921-1928 թթ.):

8 Նշուած շքանշանը հիմնելու մասին որոշում էր կայացուել դեռեւս 1919թ.:

Ամենախոնարհաբար խնդրում եմ եկեղեցու շինութեան նուիրաբերութեան համար արժանացնել նրան Հայրապետական օրհնութեան կոնդակի եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի Ի-ին կարգի շքանշանի[9], եւ ես համոզուած եմ, որ խրախուսուած Հայրապետական բարձր շնորհից, նա իր պարտքը կը կատարէ հանդէպ Մայր Աթոռի:

Տ. Աբէլ ծ. վարդապետը յայտնում է նաեւ, որ Ս. Էջմիածնի համար ձեռք է բերել Ռաֆֆու գրադարանը եւ ձեռագրերը: Հայրապետական դիւանից ստացած գրութեան համաձայն դիմել է Պօղոս Նուբար փաշային[10] եւ օժանդակութիւն խնդրել, բայց մերժում է ստացել, ուստի եւ դիմել է ուրիշներին եւ յաջողել է գնել գրադարանը:

Համաձայն Տ. Աբէլ ծ. վարդապետի խնդրի՝ վերոգրեալները պատիւ ունեմ ամենախոնարհաբար զեկուցանելու Ձերդ Ս. Օծութեանը՝ ի գիտութիւն ու ի բարեհաճ տնօրէնութիւն:

Համբուրելով Ձերդ Ս. Օծութեան Ս. Աջը
մնամ խորին ակնածութեամբ խոնարհ որդի՝ ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 276, թ. 1-2 շրջ.: Բնագիր: Ինքնագիր:

9 1921թ. օգոստոսի 13-ին Խորէն արքեպիսկոպոս Մուրադբէկեանին ուղղուած կաթողիկոսական դիւանի գրութիւնից տեղեկանում ենք, որ Գէորգ Ե Սուրէնեանց Կաթողիկոսի կողմից Գալուստ Գիւլպէնկեանը պարգեւատրուել է Ս. Գրիգոր Լուսաւորչի Ա աստիճանի շքանշանով (տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 276, թ. 4):

10 Եգիպտահայ մեծահարուստ, հասարակական-քաղաքական գործիչ, Գէորգ Ե Կաթողիկոսի հրահանգով Եւրոպայում գործող Հայ ազգային պատուիրակութեան նախագահ: